Հավելված
ՀՀ վարչապետի N 1232 - Ա որոշման

ՊԼԱՆ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | Պատասխանատու պետական կառավարման մարմնի անվանումները | Ներկայացնելու ժամկետը | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Հայաստանի Հանրապետության պետական պատվիրատուի պատասխանատու (հայտատու) ստորաբաժանումների նշանակում | Պետական կառավարման մարմիններ (ըստ անհրաժեշտության)<br>Դատախազություն (համաձայնությամբ, ըստ անհրաժեշտության)<br>Դատական դեպարտամենտ (համաձայնությամբ, ըստ անհրաժեշտության) | Յուրաքանչյուր տարվա հունիս ամսվա 1-ին տասնօրյակ | |
| 2. | Սպառազինության և ռազմական տեխնիկայի, ռազմատեխնիկական միջոցների և ունեցվածքի թիկունքային գույքի ձեռքբերման, ինչպես նաև աշխատանքների (նորոգման, հատուկ | Պետական կառավարման մարմիններ (ըստ անհրաժեշտության)<br>Դատախազություն (համաձայնությամբ, ըստ անհրաժեշտության) | Յուրաքանչյուր տարվա հունիս ամսվա 2-րդ տասնօրյակ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական, օգտահանման և այլ) իրականացման հայտի նախագծի և առաջարկությունների ներկայացում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտե | Դատական դեպարտամենտ (համաձայնությամբ, ըստ անհրաժեշտության) | | |
| 3. | Հայտի և առաջարկության քննարկում ու ամփոփ հայտի ձևավորում | Պետական կառավարման մարմիններ (ըստ անհրաժեշտության)<br>Դատական դեպարտամենտ (համաձայնությամբ, ըստ անհրաժեշտության)<br>Դատախազություն (համաձայնությամբ, ըստ անհրաժեշտության)<br>Ռազմարդյունաբերական համալիրի ռեեստրում ընդգրկված և ռազմական կարիքների համար պետական պատվեր կատարող մարմիններ (ըստ անհրաժեշտության) | Յուրաքանչյուր տարվա օգոստոս ամսվա 1-ին տասնօրյակ | |
| 4. | Գիտահետազոտական և փորձա-կոնստրուկտորական աշխատանքների ամփոփ հայտի ներկայացում ռազմարդյու-նաբերական հանձնաժողովին կից ռազմա-տեխնիկական և գիտատեխնիկական խորհրդին | ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերու-թյան նախարարության ռազմարդյունա-բերության կոմիտե | Յուրաքանչյուր տարվա օգոստոս ամսվա 2-րդ տասնօրյակ | |
| 5. | Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական | Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական հանձնաժողովին կից | Յուրաքանչյուր տարվա սեպտեմբեր | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | աշխատանքների ամփոփ հայտի վերաբերյալ եզրակացության ներկայացում | ռազմատեխնիկական և գիտատեխնիկական խորհուրդ | ամսվա 1-ին տասնօրյակ | |
| 6. | Սպառազինության և ռազմական տեխնիկայի, ռազմատեխնիկական միջոցների և ունեցվածքի թիկունքային գույքի ձեռքբերման, ինչպես նաև աշխատանքների (նորոգման, հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական, օգտա-հանման և այլ) ամփոփ հայտի ներկայացում Հայաստանի Հանրապետության ռազմարդյունա-բերական համձնաժողովի անդամներին | ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերու-թյան նախարարության ռազմարդյունա-բերության կոմիտե | Յուրաքանչյուր տարվա սեպտեմբեր ամսվա 2-րդ տասնօրյակ | |
| 7. | Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական համձնաժողովի նիստում պետական պատվերի հիմնական ցուցանիշների, ինչպես նաև ռազմական կարիքների համար պետական պատվերի ծավալների և անվանացանկի քննարկում և առաջարկությունների ուղարկում պետական պատվիրատուներին՝ հերթական ֆինանսական տարվա և պլանային ժամանակահատվածի պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար և Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտե՝ | ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտե, որպես Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական համձնաժողովի քարտուղարություն | Յուրաքանչյուր տարվա սեպտեմբեր ամսվա 3-րդ տասնօրյակ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ռազմական կարիքների համար պետական պատվերի նախագիծը ձևավորելու նպատակով | | | |
| 8. | Ռազմական կարիքների համար պետական պատվերի նախագծի մշակում և ներկայացում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը | Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն | Յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի հաստատումից հետո 10-օրյա ժամկետում | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

01.11.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ